

ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր3.1-1/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի հայտարարություն

01.04.2015թ.

Տիպ` Համայնքային ծառայության թափուր պաշտոններ  
Հայտատու` ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղապետարան  
«Համայնքային ծառայության մասին»ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մաս

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ`  
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ  
(ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-1) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Աշխատակազմի առաջատար մասնագետը`

- ա) ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին,
  - բ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով իրականացնում է գույքահարկի և հողի հարկի գանձումը, տեղական տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումը
  - գ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ներկայացնում է սահմանված կարգով հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարվող անձանց ցուցակը` համապատասխան միջոցներ կիրառելու համար:
  - դ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:  
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է `առնվազն միջնակարգ կրթություն:
  - ա) պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
  - բ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,
  - գ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
- ա) գրավոր դիմում (հանձնաժողովի անունով),
  - բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի` դիպլոմի (ների), վկայականի (ների), աշխատանքային

գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

զ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. մարտի 3-ի թիվ 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),

է) անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Մյասնիկյան գյուղապետարանի շենքում կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, (ք. Արմավիր Խ. Աբովյան 71) ամեն օր ժամը 9:00-ից մինչև 17:00-ն՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Մյասնիկյանի գյուղապետարանի աշխատակազմ

(գ. Մյասնիկյան հեռ.՝ ), ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչություն (ք. Արմավիր Խ. Աբովյան 71)

հեռ.՝ (0237) 2-07-70 (0237) 2-76-49: Մրցույթը կկայանա 2015թ. մայիսի 7-ին ժամը 12:30 -ին Մյասնիկյանի գյուղապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2015թ.-ի ապրիլի 15-ը:

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ գ. Մյասնիկյան